

**ԵՐԳԻԾԱԿԱՆՆ ՈՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ
ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ
«ԿԵՂԾ ՀԱՆՃԱՐՆԵՐ» ՎԻՊԱԿՈՒՄ***

**Երբ հայ մտքի պերճ արևներ մեզ հառաչանք սուկ դարձան,
Իրենց սուզը՝ հայ տաղանդը դատապարտեց լռության,
Թուղթը թողած՝ քարոզ դարձած, հմայքին մեջ դյուրթական,
Ես կողջունեմ գրագետը տիկին Զապել Եսայան¹:**

Մ. Տեր-Սահակյան

Բանալի բառեր – Զապել Եսայան, արևմտահայ գրականություն, երգիծանք, ողբերգություն, պատումի արվեստ, կերպարակերտում, մերժում, հասարակական իդեալ:

Մուտք

Իբրև բնաբան ընտրված այս տողերը փաստում են, որ պատմական ծանրագույն ժամանակներում ապրած Զապել Եսայանն իրապես դարձել էր իր ժամանակի ճշմարիտ վավերագիրը, ժողովրդի աջակիցն ու խանդավառողը և հենց այդպիսի կերպարով էլ ընկալվել է հայ հասարակության կողմից:

Ժամանակի թելադրանքով Եսայանը դարձավ Կիլիկիայի հայկական ջարդերի ականատեսն ու բարձրաձայնողը, Սփյուռքի գրական-հասարակական կյանքի անբաժան ուղեկիցը, Խորհրդային Հայաստանի կերտման ականատեսն ու դրանով խանդավառվողը, քաղաքական իրարամերժ ուժերի պատկերողը, իսկ կյանքի վերջում՝ անհատի պաշտամունքի գոհերից մեկը: Ուստի իր տեսածն ու ապրումները թղթին հանձնած Զապել Եսայանը

* Հոդվածն ընդունվել է տպագրության 17.07.2021:

¹ Հատված **Մարտիրոս Տեր-Սահակյանի**՝ Զապել Եսայանին նվիրված ծոն-բանաստեղծությունից՝ արտասանված 1919 թ. Կաիիրեում գրագիտուհու այցի կապակցությամբ: Այս մասին հանգամանալից տես **Զաքարյան Ա.**, Զապել Եսայան. ազգային-հասարակական գործիչը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2018, N 1, էջ 113-114:

իրավամբ դարձել է հայ ժողովրդի ազնիվ կենսագիրն ու ապագայի ուղե-
ցույցը:

Իսկ ինչպիսի՞ն կլինե՞ր եսայանական գրականությունն իր ամբողջու-
թյան մեջ, եթե պատմական հանգամանքների բերումով գրագիտուհին
ստիպված չլինե՞ր «թուղթը թողած՝ քարոզ դառնալ»: Հոգեբանական վե-
պերում նուրբ դիտարկումներ անող և թաքնված աշխարհներ բացահայ-
տելու բացառիկ ձիրքով օժտված գրագիտուհուն, որն իր գեղարվեստի
հմայքն ի ցույց է դրել զանազան ժանրերում՝ փորձելով գեղարվեստակա-
նացնել առաջին հայացքից սովորական թվացող թեմաներ, երգիծանքն ու-
ղեկցել է գրական գործունեության գրեթե ողջ ընթացքում: Ու թեև հումորն
ու նուրբ երգիծանքը ներթափանցում են երկից երկ՝ հստակորեն արտա-
հայտելով հեղինակի վերաբերմունքը կյանքի մերժելի երևույթների նկատ-
մամբ, սակայն դրանք քանակապես ու որակապես զգալիորեն զիջում են
հոգեբանական հույզերի պատկերմանը: Այնուամենայնիվ, այլ է պատկերը
գրագիտուհու «Կեղծ հանճարներ» վիպակում:

Ջապել Եսայանի երգիծանքն իր արտահայտության բարձրակետին
հասավ հենց «Կեղծ հանճարներ» վիպակում, որը մաս-մաս սկսել է հրա-
տարակվել 1905 թ. «Արևելյան մամուլ»-ի էջերում, իսկ 1910 թ. վիպակն ամ-
բողջությամբ տպագրվել է Կ. Պոլսում: Փարիզում ապրող հեղինակի հա-
մար Կ. Պոլսում վիպակի հրատարակումը բավականին դժվար աշխա-
տանք էր, մանավանդ որ այն արժանացավ ինչպես ջերմ ընդունելության,
այնպես էլ բուռն քննադատության:

Վիպակի տպագրման պահից սկսած՝ շատերը, այդ թվում նաև՝ Արտա-
շես Հարությունյանը և Օսնիկ Չիֆթե-Սարաֆը, նկատեցին նրա գլխավոր
հերոս Տաճատ Չարըքյանի և ժամանակի հայտնի բանաստեղծ Տիրան
Չրաքյանի (Ինտրա) ակնհայտ նմանությունը՝ պնդելով, որ Եսայանն այդ
կերպ երգիծել է Ինտրային: Իսկապես, նրանց կենսագրություններում նմա-
նությունները չափազանց շատ են: Նկարչական ձիրքով օժտված բանաս-
տեղծ Ինտրան՝ հռչակավոր «Ներաշխարհի» հեղինակը, որոշ ժամանակ
ապրել և ստեղծագործել է Փարիզում, գրականության մեջ մեծ տեղ է
հատկացրել սեփական **ես**-ի պատկերմանը, այնուհետև զբաղվել է ուսուց-
չությամբ՝ ամենուր թողնելով հակասական տպավորություններ: Ուստի
նրա կերպարը լավագույնս կարող էր ներկայացնել ժամանակի մտավո-
րականությանը, հատկապես երբ հեղինակն ուզում էր դիմել փոքրիկ ծայ-
րահեղությունների: Հիշենք, որ Ինտրան երբեք էլ միանշանակորեն չի ըն-
կալվել մեզանում. նրա «տարօրինակ», «պարականոն» կերպարը գրավել է
ժամանակակիցներից շատերի ուշադրությունը, նրան համարել են «խենթ»,

շարքային միջակությունից մինչև ազգային **հանձար**²: **Ու թերևս «հանձար» բառի նկատմամբ ոչ զգուշավոր վերաբերմունքն էլ Եսայանի համար պատճառ է դարձել երգիծելու նման «հանձարին» և նրան «հանձար» դարձնողներին:**

Ինտրային երգիծական կերպարի նախատիպ դարձնելու մյուս պատճառն էլ Չրաքյանի տարօրինակ վարքն ու գրական յուրահատուկ ուղղությունն էին, որով նա առանձնանում էր: Ի դեպ, այս մասին խոսել է նաև Եսայանը ժամանակակից գրական կյանքը ներկայացնելիս. Ինտրային հասնելով՝ գրագիտուհին նշել է. «...Տիրան Չրաքեան՝ միստիք փիլիսոփայ, որուն կրօնական մենամուլութիւնը հետզհետէ յիմարութեան սահմանները մտաւ»³:

Նկատենք, որ Եսայանին հաջողվել է ստեղծել տիպական, հավաքական կերպար, որը ներկայացրել է ժամանակի մտավորականության մի զգալի հատվածի վարքագիծը, ուստի վիպակի գլխավոր հերոսի՝ իրական կյանքում նախատիպ ունենալ-չունենալու հարցն այս դեպքում չպետք է քննարկել անձնական հարաբերությունների տիրույթում: Իսկ Ինտրայի՝ իր նախատիպ լինելու հանգամանքին բուռն արձագանքելու⁴ պատճառը, հավանաբար, վիպակի ունեցած լայն արձագանքն էր հասարակության մեջ:

Ճիշտ է, վիպակը լի է երգիծական տեսարաններով և ծաղրելի իրավիճակների նկարագրություններով, բայց հաստատապես չենք սխալվի, եթե ասենք, որ «Կեղծ հանձարներ» վիպակը՝ իբրև երգիծական ստեղծագործություն, հայ գրականության մեջ եզակիներից է նաև իր **ողբերգականությամբ**, և ողբերգություն ապրող հեղինակն էլ առանց տողատակերի է արտահայտվում: Սա շատ նման է պարողիաների բովանդակային քննություն կատարած Յու. Տինյանովի այն պնդմանը, որ «Կա նաև ողբերգական ենթաշերտով պարողիա, որը հաճախ ընկալվում է որպես գրոտեսկ»⁵: Ավելին՝ մեզ ծանոթ երգիծական գրեթե բոլոր ստեղծագործություններն էլ ունեն ողբերգական ենթաշերտ, սակայն Եսայանի երգիծանքի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ողբերգական ենթաշերտն ու երգիծող կերպարների դրաման առավել տեսանելի են, իսկ հեղինակն էլ իր ստեղծած կերպարների մասին Ա. Հարությունյանին գրում է. «Ջիրենք չեմ տեսներ բնաւ թշնամիի աչքերով՝ այլ ընդհակառակը տեսակ մը խանդակաթ հրայրքով, որուն մէջ երբեմն դառնութիւն, երբեմն ցաւ ու երբեմն ալ կարօտ կայ»⁶:

2 Այդ մասին մանրամասն տես **Դեմիրճյան Պ.**, Տիրան Չրաքյան (**Ինտրա**) կամ «հեքիաթի» իրականությունը, Եր., 2016:

3 **Եսայան Զ.**, Գրական երեկոներ, թրքահայ ժամանակակից գրողները, <https://bit.ly/3eADmeC> (մուտք՝ 09.03.2020):

4 Տես «Նայիրի» շաբաթաթերթ, Պեյրուք, 1 մարտ 1964, N 1, էջ 5:

5 **Тынянов Ю.**, Архаисты и новаторы, М., 1977, с. 28.

6 **Եսայան Զ.**, Կեղծ հանձարներ, Կ. Պոլիս, 1909, էջ 5:

քին ինքնագարգացումն է. ռոմանտիկ գրողը իր հայեցակարգը պարտադրում է հերոսին՝ որոշակի գաղափարական խնդիր հետապնդելով: Հերոսը դառնում է հեղինակի գաղափարական հայեցակարգի կրողը, մինչդեռ ռեալիստական ստեղծագործության մեջ սեփական հայեցակարգը հերոսին պարտադրելը պայմանավորված է իրավիճակի տրամաբանությամբ, անկախ այն բանից՝ հեղինակը ընդունում է այն, թե ոչ»⁸:

Արտաքինի պատկերումը, ինչպես սպասելի էր, երգիծելու լայն հնարավորություն է տվել հեղինակին: Մեզ ծանոթ երգիծական գրեթե բոլոր ստեղծագործություններում նկարագրվող կերպարներն ունեն ծիծաղ առաջացնող **արտաքին**, ինչն էլ համահունչ է իրենց **գործողություններին**, սակայն այստեղ ի հայտ է գալիս Զ. Եսայանի երգիծանքի ևս մեկ առանձնահատկություն. գրագիտուհին իր գլխավոր հերոսին պատկերում է արտաքինի և գործողության **հակադրամիասնության** մեջ: Տաճատ Չարըքյանը բարձրահասակ, ուժեղ, գեղեցիկ արտաքինով տղա է, ավելին՝ օժտված է մտավոր բարձր ունակություններով, սակայն այստեղից էլ երևում է հեղինակի ակնհայտ նուրբ երգիծանքը հերոսի նկատմամբ. «Տաճատ Չարըքեան ուրիշ մարդ էր, անսովոր հազուագիստ, անթափանցելի: Անիկա մեծ մարդ էր: Մէկը, որ առիթ ունեցած ըլլար մեծ հանձարներու գործերը կարդալու, առանց անոնց պատկերները տեսած ըլլալու՝ անխուսափելիօրէն պիտի մտածէր Տաճատ Չարըքեանը տեսնելով.

– Պայրըն, Շէքսփիր կամ Կէօթէ այսպէս ըլլալու էին»⁹:

Իսկ բնությունն այնքանով էր բարեհաճ եղել Տաճատի նկատմամբ, որ վերջինիս «հանձարեղ» գլուխը բազմեցրել էր թիկնեղ և հաստատուն մարմնի վրա. «Եթէ Տաճատ Չարըքեան վատոյժ տղայ մը ըլլար, պիտի ճնշուէր իր գլխուն ծանրութեան տակ, և անշշուկ պիտի անցնէր աշխարհիս վրայէն»: Միայն ձայնն էր տկար և դիմացիսին շուտ հոգնեցնող, ինչի պատճառով էլ նա «ազնուական լռութեան մը դատապարտեց ինքզինքը»¹⁰: Ընթերցողի համար դժվար չէ նկատել, որ երգիծանքի տարբեր տեսակներից Եսայանն ընտրել է **հեզնանքը**՝ նրբին իրոնիան, որն ամենահարազատն էր իր գրչին. նա իր էությամբ պարզապես ընդունակ չէր երգիծանքի միջոցով ավերումներ կատարելու, ոչնչացնելու ճիշտ ուղուց շեղված հայրենակիցներին:

Մարդկային բնավորության նկարագրությունը, **խեղված ներաշխարհի** ձաղկումը ևս երգիծելու առատ նյութ են տվել հեղինակին:

Արվեստներից նախապես նկարչությունն ընտրած Տաճատը մի օր հասկանում է, որ իր նման «հանձարեղ» մարդու համար նկարչության ըն-

8 Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, Եր., 1998, էջ 101:

9 Եսայան Զ., Կեղծ հանձարներ, էջ 9:

10 Նույն տեղում, էջ 12:

ձեռած հնարավորությունները քիչ են, և ինքը չի կարող իր **ես**-ն ամբողջությամբ ցուցադրել, ուստի որոշում է գրադվել գրականությամբ. «Գրականութիւնը խօսքին աստուածային և ճկուն յատկութեանը շնորհիւ թոյլ պիտի տար որ ճանչցնէ մարդկութեան՝ համայն տիեզերքին այն գերագոյն, անհասանելի, անթափանցելի աշխարհը, որ իր հոգին էր, իր **ես**-ը (ընդգծումը մերն է, իսկ գլխատառերով հեղինակն է գրել - Հ. Հ.), ամենակարեւորը, զոր պիտի ցուցադրէր նեարդ առ նեարդ, գուրգուրանքով, խնամքով՝ չմոռանալով անոր նուիրական խորշիկներէն ոչ մէկը»¹¹: Իսկ գրական աշխարհում առավել հայտնի դառնալու համար նա որոշում է մեկնել Փարիզ:

Գրականության մասին Տաճատի պատկերացումներն այդքան գունագեղ ներկայացնող Զ. Եսայանը վիպակում հանդես է գալիս նաև որպես **գրաքննադատ**՝ իր երգիծող հայացքն ուղղելով այն գրողներին, որոնք ամեն ինչ անում էին գրականության մեջ բացառապես իրենց **ես**-ը ներկայացնելու համար և ընթերցողին էլ ձանձրացնում էին իրենց նեղ անձնական ապրումների պատկերմամբ:

Գրականագետ Սևակ Արզումանյանը, քննելով Տաճատի կերպարը, իրավամբ եկել է այն եզրահանգմանը, որ «Նրա բնավորության մեջ մոլորվածի հոգեբանությունը շերտ առ շերտ կուտակումներ է տալիս, և նա ծրագրում է մեկը մյուսից ավելի անհավանական գործեր, հղանում է շքեղ երազներ: Այդ շքեղ երազն է նրան իր թաղից հանում և Փարիզ տանում: Վիպակում ցույց է տրված, որ Տաճատը գնում է Փարիզ ո՛չ սովորելու կամ ուսումնասիրելու դիտավորությամբ: Նա կարծում է, որ իր փառքի համար մի թաղը նեղ է...»¹², սակայն այս երազային Փարիզն էլ դառնում է նրա սին երազների գերեզմանը: Փարիզ մեկնելիս նավի վրա նրան հանդիպած Բարսեղն էլ կարծես այդ սնափառության գերեզմանափորն է, մինչդեռ իրենց փոքրիկ թաղամասում Տաճատն իսկական «հանձար» էր, չկար նրան հավասարը, և դա թույլ էր տալիս նրան վերևից նայել ամենքին: Տաճատի մեծության փառքը երբեք ոչ ոք կասկածի տակ չէր դրել՝ բթացնելով նրա մեջ կատարելության հասնելու տենչը, իսկ զրկանքներին և դժվարություններին այդպես էլ անհաղորդ մնացած Տաճատը չէր հասկացել՝ որն է իսկական արվեստագետի կոչումը: Ուստի իրենց փոքր թաղից դուրս գալով՝ նա հասկացավ, որ միայն խիստ նեղ միջավայրում կարող են երևալ իր ինչ-ինչ առավելություններ, այդ իսկ պատճառով նա արդեն երազում էր վերադառնալ այնտեղ, հատկապես Փարիզում ստեղծված նյութական անբարենպաստ պայմաններում, և ահա այստեղ էլ սկսվում է **ողբերգության** պատկերումը:

11 Նույն տեղում, էջ 20:

12 Արզումանյան Ս., Ձապել Եսայան (կյանքը և գործը), Եր., 1965, էջ 97-98:

2. Ողբերգականը

Ողբերգության պատկերման միջոցները, ի տարբերություն երգիծանքի, Զ. Եսայանի ստեղծագործության մեջ այդքան էլ խայտաբղետ և ուշարժան չեն. այստեղ առավել կարևոր են ողբերգության պատճառները, որոնք տարբեր են: Տաճատի համար **ողբերգության պատճառը** Բարսեղի հետ համեմատությունն էր, որի կյանքն այլ կերպ էր դասավորվել: Զրկանքների և աշխատանքի սովոր երիտասարդն ուներ վեհ ձգտումներ և ձեռնարկում էր դրանց հասնելու կոնկրետ քայլեր: Նա, վստահաբար կարող ենք ասել, Եսայանի իդեալ հերոսն է: Ճիշտ է, վիպակում Բարսեղը չի պատկերվում կյանքի տարբեր բնագավառներում, և ընթերցողն էլ չի կարող ամբողջական պատկերացում կազմել նրա մասին (դա նաև ստեղծագործության ժանրային պահանջներից է բխում), սակայն նրան էր վիճակված իր օրինավոր կեցվածքով և ճշմարիտ կենսաձանաչողությամբ հակադրվել Տաճատին և այլոց՝ ապացուցելով, որ սնափառությունն ու ինքնասիրահարվածությունը կարող են միայն վնասել և խորտակել բնատուր տաղանդ ունեցող մարդկանց:

Հեղինակի համար ողբերգության պատճառներից է նաև այն, որ իր հանձարեղ կեղծիքի մեջ Տաճատը միայնակ չէր: Փարիզում նա հանդիպում է Գաբրիել Պալլըքձյանին, Անտոն Յարայանին, Հրանտ Մարտիկյանին (վերջինս, չկարողանալով լինել լավ բանաստեղծ, դարձել էր գրաքննադատ), Սուրեն Սահակյանին և այլոց, որոնք բոլորն էլ տաղանդավոր անձինք էին, սակայն դիպվածաբար հայտնվել էին ոչ իրենց համար նախատեսված տեղերում:

Սոցիալական ծանր պայմանները, որոնք էականորեն փոխել էին մարդկանց կենսակերպը, նույնպես ողբերգական ենթաշերտ են հաղորդում վիպակին: Մասնավորապես հայ երիտասարդ Մանուկի անկումով հեղինակը ցույց է տալիս Փարիզում հաստատված ողջ հայ ուսանողության սոցիալական ծանր պայմանները, անմարդկային կենսակերպը, և այստեղ Եսայանը կարողացել է հասնել խոր ընդհանրացումների ու հոգեբանական բացահայտումների: Գունագեղ երազանքների կանչով Փարիզ մեկնած երիտասարդները, բախվելով դաժան իրականությանը, սկսում են մտածել բացառապես ապրուստի միջոցի մասին:

Հաջորդ սերնդի խաթարվող կյանքը թերևս ողբերգական ամենամեծ ազդակներն է հաղորդում վիպակին: Բարսեղը խոր փստոսանքով է նայում «կեղծ հանձարներին» փոխարինած սերնդին, որը բավականաչափ կրքոտ ու զգացմունքային չէ. այս սերնդի բոլոր գործողությունները հաշվարկված են, նա գուցե չի սխալվում, սակայն չունի նաև նախորդ սերնդի երազանքներն ու ձգտումները, որոնք, ճիշտ է, սնվում էին կեղծ փառամո-

լուծամբ, սակայն իրապես մարդկային էին: Ահա այս մտորումներով էլ ավարտվում է վիպակը: «Ավարտի մեջ գրեթե բացակայում են հեզնանքի ու ծաղրի սլաքները, և տիրապետող են դառնում կարոտի ու դառնության հուշերը, ցավն ու ափսոսանքը»¹³:

Եզրակացություններ

Արևմտահայ գրականության զարգացման մեջ իր ուրույն դերն ունեցած Զապել Եսայանը «Կեղծ հանձարներ» վիպակում գեղարվեստի հզոր ուժով պատկերել է ժամանակի մտավորականության կյանքը: Վիպակի դիպաշարն ունի իրական հիմք, գլխավոր հերոսի նախաստիպը հայտնի բանաստեղծ Ինտրան է, որի «պարականոն» գրականությունն ու կյանքը երգիծանքի առատ նյութ են տվել Եսայանին:

Նուրբ հոգի և գեղարվեստական բարձրակարգ մտածողություն ունեցող գրագիտուհու համար անընդունելի էին ոչնչացնող ծաղրն ու անհանդուրժողական քննադատությունը, ուստի նա իր ստեղծագործությունը համեմատ նրբաձաշակ երգիծանքով, որն ուներ նաև ողբերգական ենթաշերտ:

Երգիծանքը Եսայանի համար միջոց էր՝ պատկերելու կյանքի արատավոր կողմերը, հստակ գնահատական տալու հասարակության՝ անձի արժևորման մերժելի չափանիշներին, քանի որ ընթերցողի վրա տպավորություն թողնելու համար երգիծական պատկերներն ամենաազդեցիկն են:

Վիպակի կառուցվածքը պարզ է, կերպարակերտման եղանակը՝ հաջողված: Կերպարներին տրված է ինքնադրսևորման հնարավորություն, ընթերցողը վիպական գործողությունների անմիջական «մասնակիցն է», ինչը հետաքրքրաշարժ է դարձնում վիպակը:

Զապել Եսայանի երգիծանքի գլխավոր առանձնահատկությունը դրսևորվում է նրա գրչին բնորոշ հոգեբանական նուրբ դիտարկումներում. **նուրբ հեզնանքը** թաքնված է ծիծաղ առաջացնող երևույթների պատճառների լիարժեք ուսումնասիրման և պատկերման մեջ: Բարձր է հեղինակի գեղագիտական ըմբռնումների մակարդակը. իրապաշտական այս ստեղծագործության մեջ կյանքի ամենասուր երևույթներն անգամ պատկերված են առանց արվեստագուրկ նատուրալիստական տեսարանների: Նկատելի է, որ երգիծականն ու ողբերգականը վիպակում հանդես են գալիս միասնաբար՝ ի ցույց դնելով նույն երևույթի երկու կողմերը: Եսայանական կերպարները խորապես մարդկային են և համոզիչ, նրանք վերցված են իրական կյանքից, ապրում են իրենց ստեղծած երազներով և փառքով, մոլորվում են կյանքի հորձանուտներում իրենց հետևից թողնելով ափսոսանք ու

¹³Նույն տեղում, էջ 102:

թախիծ: Գրագիտուհին իր առջև դրված խնդիրն իրագործել է կատարելապես՝ ընթերցողին ներկայացնելով կյանքի խաչմերուկներում չկորսվելու սեփական պատկերացումները:

Միաժամանակ՝ ամենակարող երգիծանքի միջոցով նա մի կողմից մերժեց իր ժամանակների հայ մտավորականության մի զգալի հատվածի կենսակերպն ու բարոյական պատկերացումները, իսկ մյուս կողմից գալիք սերնդին ցույց տվեց ճշմարիտ կյանքով ապրելու եղանակը:

Հայկ Ա. Հովհաննիսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմությունը, հեղինակ է 8 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ haykhovhannisyan20@yandex.ru

Summary

THE SATIRE AND THE TRAGEDY IN THE NOVEL “PHONY GENIUSES” BY ZABEL YESAYAN

Hayk A. Hovhannisyan

Key words – Zabel Yesayan, Western Armenian literature, satire, tragedy, the art of novel, creation of an image, rejection, social ideal.

The article is about the satirical novel “Phony Geniuses” which was written by Zabel Yesayan. In it, the author depicts the life of the young Armenian intelligentsia, who were living in Paris at that time. Yesayan clearly shows how the wrong assessment of the society turns a talented man into lazy, haughty and self-assured person.

In this work we have tried to refer to the prototype of the novel. We tried to show the obvious similarity of Intra – one of the modern writers to the main character of the novel. Most likely, Zabel Yesayan did not like the self-containedness of Intra’s literature, the sheer size of his self-image. That is why she criticizes the literature of her main character in the novel.

In the article we referred to the peculiarities of Zabel Yesayan's satire showing the unity of satire and tragedy. Even the most satirical images of Yesayan have a tragic sublayer and the author's pain is clearly seen in the composition.

Zabel Yesayan's novel "Phony Geniuses" is a realistic work, it stands out with its high art and with a unique way of depicting reality.

Резюме

САТИРА И ТРАГЕДИЯ В ПОВЕСТИ ЗАПЕЛ ЕСАЯН «ФАЛЬШИВЫЕ ГЕНИИ»

Айк А. Оганнисян

Ключевые слова – Запел Есаян, западноармянская литература, сатира, трагедия, искусство повествования, создание образа, отказ, социальный идеал.

В повести «Фальшивые гении» известная западноармянская писательница Запел Есаян описывает жизнь молодых представителей армянской интеллигенции, проживающих в Париже. Автор показывает, как оценка общества влияет на талантливого человека, делает его ленивым, высокомерным и самовлюбленным.

В данной статье мы попытались изучить прототип главного героя повести – одного из современных писателей того времени – знаменитого Интры, и показать их очевидное сходство. По всей вероятности, З. Есаян не нравилась эгоцентричность творчества Интры, масштабы описания его собственного Я, поэтому она подвергает критике и творчество главного героя своего произведения.

В рамках статьи мы остановились также на анализе особенностей повести З. Есаян, отмечая единство сатиры и трагедии, рассмотрели различные сатирические образы и методы их создания, показали причины трагедии героя и способы ее выражения. Заметим, что даже самые сатирические образы повести З. Есаян имеют трагический подтекст: в произведении заметна пережитая боль автора. Сатира используется как инструмент для демифологизации.

Подводя итог проведенного исследования, отметим, что повесть З. Есаян «Фальшивые гении» – реалистическое произведение, отличающееся высоким мастерством, уникальным способом изображения действительности

и отражающее трагедию представителей молодого поколения армянской интеллигенции.

REFERENCES

1. “Nairi” shabat‘at‘ert‘, Pēyрут‘, 1 mart 1964, N 1 **(In Armenian)**.
2. **Arzumanyan S.**, Zapel Yesayan (kyank‘ë yev gortsë), Yer., 196 **(In Armenian)**.
3. **Avetisyan Z.**, Grakanut‘yan tesut‘yun, Yer., 1985 **(In Armenian)**.
4. **Demirchyan P.**, Tiran Ch‘rak‘yan(Intra) kam “hek‘iat‘i” irakanut‘yunë, Yer., 2016 **(In Armenian)**.
5. **Tynjanov Ju.**, Arxaisty I novatory, M., 1977 **(In Russian)**.
6. **Yesayean Z.**, Grakan yerekoner, <https://digilib.aua.am/book/> **(In Armenian)**.
7. **Yesayean Z.**, Keghts hancharner, K. Polis, 1905 **(In Armenian)**.
8. **Zak‘aryan A.**, Zapel Yesayan. azgayin-hasarakakan gortsich‘ë, “Patma-banasirakan handes”, Yer., 2018, N 1 **(In Armenian)**.